
ՕՏԱՐ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻՑ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՎԱՂ ԱՐՔԱՆ

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Հայաստանի՝ որպես միացյալ համահայկական պետության ժամանակակից միջազգային անվան հնագույն գրավոր հիշատակությունը վկայված է Աքեմենյան արքա Դարեհ I-ի (մ. թ. ա. 522-486 թթ.) թողած Բագիստանյան եռալեզու արձանագրության մեջ, որտեղ բարելերեն Սրաժտ և էլամերեն Harminuia տարբերակներին զուգահեռ գործածվում է հին պարսկերեն Armina անվանաձևը¹: Վերջինս էլ հունարենի ու լատիներենի միջոցով տարածվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներում՝ որպես Հայաստան անվան հումանիշ:

Հետագայում պատմագրության հայր Հերոդոտոսը (մ. թ. ա. V դ.) նույնպես Հայաստանի (Ἀρμενία) վերաբերյալ առաջին տեղեկությունը հաղորդում է Աքեմենյան սատրապությունների հետ կապված նկարագրություններում, մինչդեռ ավելի վաղ դեպքերի առնչությամբ՝ նույնիսկ Մարաստանին վերաբերող նրա տեղեկություններում, Հայաստան անունը բացակայում է²: Առհասարակ, մեր աշխարհագրական տարածքը բնորոշող որևէ անվանում, նախքան Աքեմենյան տիրապետությունը, Հերոդոտոսը չի հաղորդում:

Այնինչ մեկ այլ հույն պատմագիր՝ Դիոդորոս Սիկիլիացին (մ. թ. ա. I դ.), Հայաստանի մասին սուղ տեղեկություններ է պահպանել մ. թ. ա. IX դ. վերաբերող իրադարձությունների կապակցությամբ: Հետևաբար, կարելի է նշել, որ Հայաստանի՝ որպես անկախ կամ կիսանկախ միացյալ թագավորության մասին ամենավաղ պատմական հիշատակությունը օտար հեղինակների գրական երկերում գտնվում է Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարանում»³: Դիոդորոսը (մ. թ. ա. 90-20 թթ.), խոսելով իրենից մի քանի դար առաջ տեղի ունեցած անցքերի մասին, հիշատակում է Հայաստանի թագավոր Բարզանեսին (Βαρζάνης), որը, ըստ նրա, ժամանակակից էր Ասորեստանի Նինոս արքային և Շամիրամ (Σαμίραμις) թագուհուն:

¹ Բագիստանյան արձանագրության հրատարակություններից տես՝ R. G. Kent. Old Persian, Grammar, Texts, Lexicon. New Haven, Connecticut, 1953, p. 116-134; W. Brandenstein, M. Mayrhofer. Handbuch des Altpersischen. Wiesbaden, 1964, S. 85, 105; А. А. Фрейман. Древнеперсидские клинообразные надписи.— «Восток», кн. V, 1925, с. 3, 6-7; Գ. Մ. Նալբանդյան. Հին պարսկերեն, Երևան, 1963, էջ 119, 128 և այլն:

² Հեռոդոտոսի. Պատմություն ինը գրքից (այսուհետև՝ Հերոդոտոս), թարգմ. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1986, գ. I, 180, էջ 74, գ. I, 194, էջ 80, գ. III, 93, էջ 197, գ. V, 49, էջ 305 և այլն:

³ Դիոդորոսի. Սիկիլիացի. Պատմական գրադարան (հատվածներ), աշխատասիրությամբ Մ. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1985, II, 1, 8-9:

ԲԱՐՁԱՆԵՍԻ ՄԱՍԻՆ ԱՌԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Ժամանակին Ա. Գարագաշյանը ենթադրում էր, որ հունական աղբյուրում առկա Բարզանես անվանաձևը կարող է Վարդան անվան աղավաղումը լինել⁴: Հ. Աճառյանը իրավամբ մերժում է այս տեսակետը⁵, քանի որ Բարզանես ձևը գոյություն ունի թե՛ որպես առանձին անուն և թե՛ որպես անձնանունների բաղկացուցիչ մաս և ուստի չի կարող որևէ անվան աղավաղված ձև լինել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բարզանես անունը բացակայում է Հայկական լեոնաշխարհում գոյություն ունեցած պետությունների արքայացանկերում՝ հետազոտողների մեծ մասը Բարզանեսին համարել է մտացածին կամ առասպելական անձնավորություն: Հայաստան (Αρμενία) բառի գործածությունը տվյալ հատվածում, իր հերթին, համարվել է ավելի ուշ իրողությունների վերագրում հին ժամանակներին: Սա ապացուցելու համար բերվել է Դիոդորոսի երկի նույն հատվածը, որտեղ խոսվում է Ասորեստանի արքայի կողմից բաբելացիների երկիրը գրավելու մասին և միննույն ժամանակ ասվում է, որ ներկայիս (= մ. թ. ա. I դ.) Բաբելոն քաղաքը դեռևս չէր կառուցվել: Ենթադրվել է, որ այս կերպ Դիոդորոսը պատմական հետագա շրջանի անվանումով բնորոշում է իր համար առավել անհայտ հին շրջանը:

Հարկ է նշել, սակայն, որ բերված համեմատությունն այնքան էլ ճիշտ չէ: Իրականում Բաբելոն քաղաքը գոյություն ուներ դեռևս մ. թ. ա. II հազարամյակում⁶: Դիոդորոսը գրում է, որ Բաբելոնը դեռ չէր կառուցվել, քանի որ նա այդ քաղաքի կառուցումը վերագրում է Նինոսի կին Շամիրամին: Համաձայն Դիոդորոսի՝ Շամիրամը ձեռնարկում է Բաբելոնի շինարարությունը իր ամուսին Նինոսի մահվանից հետո: Հավանաբար, այստեղ խոսքը քաղաքի լայնածավալ վերանորոգման մասին է:

Ամեն դեպքում, Բարզանես կոչվող արքայի մասին տեղեկությունը հանիրավի անուշադրության է մատնվել և ըստ արժանվույն չի գնահատվել ու չի մեկնաբանվել հայագիտության ու արևելագիտության մեջ: Այնինչ Դիոդորոսի հաղորդած պատումի մեջ միակ ղեցաբանական տարրը Բարզանեսի անվանումն է, որին պայմանականորեն կարելի է համարել Ասորեստանի ծաղկման գագաթնակետին ժամանակակից արքա: Նինոսն ու Շամիրամը խորհրդանշում են Ասորեստանի առավելագույն հզորության շրջաններից մեկը և իրենց մեջ, ըստ երևույթին, խտացված ձևով մարմնավորում Աշշուրի (Ասորեստանի) մի քանի արքաների⁷: Ամենայն հավանականությամբ, Բարզանեսը նույնպես,

⁴ Ա. Մ. Գ ա ր ա գ ա շ յ ա ն. Քննական պատմություն հայոց, հ. Ա, Թիֆլիս, 1895, էջ 39:

⁵ Հ. Աճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. I, Երևան, 1942, էջ 387:

⁶ Հմմտ. История древнего Востока, под ред. В. И. Кузицина. М., 1979, с. 130; История древнего Востока, ч. I (Месопотамия), под ред. И. М. Дьяконова, М., 1983, с. 368 և այլն:

⁷ Սեպագիր տեքստերում հայտնի չէ Նինոս անունով թագավոր: Բնչ վերաբերում է Շամիրամին, ապա որպես նրա կերպարի պատմական նախատիպ սովորաբար համարում են Բաբելոնի Շամնուրամաթ թագուհուն (մ. թ. ա. IX դարի վերջ), որը ասորեստանյան արքա Շամշի-Ադադ V-ի (823-811) կինն էր:

ինչպես և Նինոսն ու Շամիրամը, իրենից հավաքական կերպար է ներկայացնում:

Դիողորոսի հաղորդած տեղեկության համաձայն՝ Արաբիայի թագավոր Արիայոսի հետ դաշնակցելուց և Բաբելոնիան գրավելուց հետո Ասորեստանի արքա Նինոսը մեծաթիվ զորքով ներխուժում է Հայաստան, ավերում մի շարք քաղաքներ և կոտորում տեղի բնակիչներին: Նրանց թագավոր Բարզանեսը ստիպված առատ ընծաներով դիմավորում է Նինոսին և հանձն առնում կատարելու նրա բոլոր հրամանները: Նինոսը դաշինք է կնքում Բարզանեսի հետ, համաձայնում, որ նա զորք ուղարկի իրեն և միջոցներ՝ իր բանակի համար: Դրանից հետո ավելի հզորացած Նինոսն արշավում է Մարաստան, հաղթում Փառնոս թագավորին և կնոջ ու յոթ որդիների հետ խաչ հանում⁸:

Ն. Ադոնցի մի հետաքրքիր ենթադրության համաձայն՝ Դիողորոսի երկում տեղի է ունեցել անունների շփոթ, և իրականում Բարզանեսը, ըստ նրա, արաբների արքան էր, իսկ Արիայոսը Հայաստանի թագավոր Արա Գեղեցիկը կարող էր լինել⁹: Առաջին հայացքից այս վարկածը խիստ հավանական է թվում: Սակայն անունների շփոթ ենթադրելու համար պետք է որ այդ անունները կողք կողքի գործածվեին: Մինչդեռ Դիողորոսը բավական երկար գրում է Արիայոսի, անհաղթահարելի Արաբիայի և ազատասեր արաբ ժողովրդի մասին, այնուհետև պատմում է, թե ինչպես Նինոսը, արաբների տիրակալին վերցնելով իր հետ, շարժվել է Բաբելոնիա, գրավել այդ երկիրը, նոր հետո միայն խոսում է հայաստանյան դեպքերի և Բարզանես թագավորի մասին¹⁰:

Բացի այդ, Բարզանես անվան ստուգաբանությունից հետո՝ Ն. Ադոնցի վարկածի անհրաժեշտությունն այլևս վերանում է:

ԲԱՐԶԱՆԵՍ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բարզանես անձնանունը, անկասկած, իրանական ծագում ունի: Պատմության մեջ հայտնի երկրորդ Բարզանեսը, որի մասին տեղեկություններ է հաղորդում Արիանոս պատմիչը, եղել է պարթևների սատրապը¹¹: Իրականում, սակայն, Արիանոսի երկում այս պատմական անձնավորության անունը վկայված է Բրազանես ձևով: Ֆ. Յուստին, հավանաբար, սա համարելով Բարզանես-ի աղճատված տարբերակ, այն միացնում է հայոց թագավորի անվանը և ներա-

⁸ Դիողորոսի կողմից Նինոսի Պատմական գրադարան, էջ 16:

⁹ Ն. Ադոնցի. Հայաստանի պատմություն (ակունքները, X-VI դդ. մ. թ. ա.), Երևան, 1972, էջ 376:

¹⁰ Հնարավոր է Արիայոսի անունը կապել արոեացի արաբների ցեղանվան հետ, որոնք, ըստ I դարի հռոմեացի պատմիչ Պլինիոս Ավագի, բնակվում էին Մծբինի շրջակայքում. այս տարածքը վաղմիջնադարյան հայ մատենագրության մեջ կոչվում էր Արուաստան կամ Տաճկաստան: Չնայած Ֆ. Յուստին արաբ տիրակալի՝ Ἀραβίος անունը միացնում է Կյուրոս Կրտսերի տեղակալի՝ նույնահունչ անվան հետ և ընդգրկում իրանական անունների մեջ՝ մինևույն ժամանակ այն համարում քաղղեական անուն (F. J u s t i. Iranisches Namenbuch. Marburg, 1895, S. 22-23):

¹¹ А р р и а н. Поход Александра, перевод с древнегреческого М. Е. Сергеевко. М.-Л., 1962, IV, 7, 1, с. 139; Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987, IV, 7, 1, էջ 137-138:

ում իր՝ իրանական անունների բառարանում¹²: Ե. Գրեկյանի հաղորդմամբ՝ նույն անձնանունը հանդիպում է նաև աքադական սեպագիր տեքստերում, որտեղ այն առկա է *Warzan (Յ-ar-za-an) գրությամբ: Այս անձնավորությունը հիշատակվում է որպես Ջագրոսյան լեռների շրջանում գտնվող մի երկրամասի տիրակալ մ. թ. ա. 711 թ.¹³:

Ինչպես երևում է, ԵօֆՅանի կամ Warzan անվան արմատը հատկապես մտն է օսերեն և միջին պարսկերեն warz- «հմայք» արմատին, որը ցայսօր առկա է օս. warzən / warzun «սիրել» բառի մեջ: Քանի որ Բարզանես/Բրազանես անձնանունը տարածված էր հյուսիսարևելյան իրանական լեզուների ընդգրկման տիրույթում, այն, ամենայն հավանականությամբ, կարելի է համարել սկյութական անուն: Սկյութերենը՝ որպես արդի օսերենի և միջնադարյան ալաներենի «նախահայր», պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևելյան խմբին¹⁴:

Սև ծովի հյուսիսային առափնյակում գտնված հունաստան վիճագրերում առկա են սկյութական մի շարք անձնանուններ, որոնց արմատն է սկյութերեն vārz- «սիրել»¹⁵: Այս արմատից կազմված *vārzāna «հմայիչ, սիրելի» ածականից հենց կարող էր կազմվել սկյութերեն Vārzān անձնանունը, որը հունարեն տառադարձվել է ԵօֆՅանի ձևով¹⁶: Սկյութերեն *vārzān- ածականին օսերենում համապատասխանում է warzon «քնքուշ, սիրելի», «սիրային» բառը, ինչպես āryana ձևից ունենք սկյութերեն ālān / āllān և օսերեն allon «ալան», «մարդ, տղամարդ»¹⁷:

Այսպիսով, ԵօֆՅանի սկյութական անունը պետք է որ նշանակեր «հմայիչ, սիրելի, սիրելիան» (հմմտ. հայ. Միրեկան, արաբ. Habīb անունները): Այդ կազ-

¹² F. J u s t i. Նշվ. աշխ., էջ 65. Ֆ. Յուստին այս ԵօֆՅանի անունը համեմատում է ավեստ. varezāna «պաշտպան, բարեկամ», «հարևան» (Schutzverwandter, Nachbar) բառի հետ:

¹³ S t é u R. Z a d o k. The Ethno-Linguistic Character of Northwestern Iran and Kurdistan in the Neo-Assyrian Period. Jerusalem, 2002, p. 77. Հնարավոր է, որ իրանական այլ՝ *Vrzana անձնանունն է ներկայացնում սեպագրային Ur-za-na անունը, որը կրել է Մուծածիրի տիրակալը (նույն տեղում, էջ 45): Որոշ հետազոտողներ, սակայն, Ur-za-na և Յ-ar-za-an ձևերը համարում են նույն անվան տարբերակներ (տե՛ս Յ. Ա. Г р а н т о в с к и й. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, с. 328, 398): Է. Գրանտովսկին, ընդհանրապես, ժխտում է ԵօֆՅանի անվան կապը սեպագրային Յ-ar-za-an ձևի հետ (նույն տեղում, էջ 210, 398): Ֆ. Քյոնիգը Յ-ar-za-an ձևը համեմատում է Wardan, Wardanes անվան հետ (F. W. K ö n i g. Älteste Geschichte der Meder und Perser. Leipzig, 1934, S. 56):

¹⁴ Սկյութերենի մասին տե՛ս Ե. Ի. Ա б а е в. Скифо-сарматские наречия.— В кн.: “Основы иранского языкознания, древнеиранские языки”. М., 1979, с. 272-361; R. S c h m i t t. Andere Altiranische Dialekte.— “Compendium Linguarum Iranicarum”, Wiesbaden, 1989, Skythisch, S. 92-94.

¹⁵ Ե. Ի. Ա б а е в. Словарь скифских слов.— В кн.: “Основы иранского языкознания”, с. 308.

¹⁶ Vārz- սկյութական արմատը հունարեն տառադարձվել է (ο)αρζ- / ούαρζ տարբերակներով, սակայն առկա է նաև սկյութ. /v/ - հուն. /β/ համապատասխանությունը, օրինակ՝ սկյութ. varu «լայն» բառի դեպքում ունենք Βορυσθένης (Դնեպր գետի հին անվանումը) և Ούαρδάνης (Կուրան գետի հին անվանումը) գրությունները, որոնցից առաջինը գալիս է *varu-stāna կազմությունից, իսկ երկրորդը՝ *varu-dānu (նույն տեղում) կամ, օրինակ, Vardān (հայ. Վարդան) անձնանունը Կերչից գտնված III դ. մի վիճագրում տառադարձված է Βάρδανος ձևով (Корпус боспорских надписей, под ред. В. В. Струве, М.—Л., 1965, с. 39):

¹⁷ Ե. Ի. Ա б а е в. Осегинский язык и фольклор. Т. I. М.—Л., 1949, с. 245-247.

մությունը հանդիպում է նաև բարդության միջոցով ստեղծված անձնանուններում՝ Μιθροβαρζάνης (Miθra-vārzāna) «Միհրի սիրելի», սողդերեն βγw'rz (*Baga-wārza) «աստծո սիրելի» և այլն¹⁸: Ըստ որում, ուշագրավն այն է, որ նշված անձնանունները կարող են բացատրվել ոչ միայն կրավորական նշանակությամբ, այլև ներգործական՝ որպես «Միհրին սիրող» կամ «Աստծուն սիրող, Աստվածասեր», ինչպես նաև չեզոք ձևով՝ «Միհրի նման գեղեցիկ», «Միհրակերպ» և «Աստծո նման գեղեցիկ», «Աստվածատես»¹⁹:

Սկյութական Βαρζάνης անձնանվան արմատը՝ warz-ը, հիմնականում երկու ստուգաբանություն ունի. Պետերսոնն այն համեմատում էր հայ. գեղձ՝ «սաստիկ փափագ» բառի հետ և բխեցնում հնդեվրոպական (h.-ե.) *welg h - «ցանկություն» նախաձևից²⁰, իսկ Աբանը warz- արմատը կապում էր h.-ե. *werg- «բանել, գործել, դյուրեղ» արմատի հետ²¹ (այս նախաձևի մի ձայնդարձից հայերենում ունենք գործ բառը): Ամեն դեպքում, h.-ե. *welg h- և *werg- նախաձևերը մոտ են ոչ միայն հնչյունապես, այլև իմաստներով, ուստիև դրանք կարելի է պարզապես մեկ արմատի տարատեսակներ համարել:

*welg h- «ցանկություն» և *werg- «դյուրանք» նախաձևերի քննությունը ցույց է տալիս, որ «հնդեվրոպացիների» պատկերացմամբ՝ սերը, այն է՝ ցանկությունն ու տենչանքը, անմիջականորեն առնչվում էր դյուրանքի և հմայական հատկությունների հետ: Դա երևում է նաև պահպանված մի շարք ժառանգ ձևերում, որոնք երկու իմաստներն էլ ունեն, ինչպես միջ. պարսկ. warz - «հմայք, դյուրանք», «կախարդանք», սողդ. *warz (wřz) - «հրաշք», ռուս. ворожить - «կախարդել» և «տենչալ», բուլղ. вражн - «կախարդ», հուն. οργια - «միստերիա», «սրբազան արարողություն»²²:

Նշված հասկացությունները, ամենայն հավանականությամբ, անմիջականորեն աղերսվել են հողագործությանը՝ կապված մեռնող-հառնող աստծո պաշտամունքի և դրան առնչվող ծեսերի հետ: Հունաստանում, օրինակ, օրգիաներն ու միստերիաները սերտորեն կապված էին Դիոնիսոս-Բաքոսի պաշտամունքին, որը փոքրասիական ծագում ունեցող՝ հողագործության և առնական բեղմնավորող ուժերը խորհրդանշող աստված էր²³: Մեծ Հայքում

¹⁸ В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка. Т. IV. Л., 1989, с. 54.

¹⁹ Նշանակության զարգացման համար հիմն. սանսկ. kṛpā բառի «կերպ, կերպարանք» և «գեղեցկություն» իմաստները, ինչպես նաև հայ. գեղ արմատի «գեղեցկություն» և «գեղեցիկ դեմք կամ տեսք» նշանակությունները. վերջին արմատը, ըստ Հ. Աճառյանի, ծագում է h.-ե. *wel- «տեսնել» նախաձևից (Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 532-533):

²⁰ P e t e r s s o n. Arische und armenische Studien. Lund, 1920, S. 128.

²¹ В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка, с. 54.

²² Նույն տեղում: Ինչ վերաբերում է ռուս. вразиться «սիրահարվել» բարբառային բառին, ապա այն Վ. Աբանը փոխառյալ է համարում սկյութերենից: Հետաքրքիր է, որ այս բառի արմատը հնչյունապես լրիվ համապատասխան է Բրազանես անվանաձևի արմատին:

²³ Ըստ հունական առասպելի՝ թափառելով Եգիպտոսում ու Միդիայում՝ ցնորված Դիոնիսոսը գալիս է Փոյուգիա, որտեղ մայր աստվածուհի Կյուբելեն բուժում է նրան և մասնակից դարձնում իր օրգիական խորհրդածեսերին: Դրանից հետո Դիոնիսոսը Թրակիայով գնում է Հնդկաստան՝ ամենուրեք տարածելով խաղողագործությունը և գինու պաշտամունքը (А. Ф. Лосев. Дионис. – “Мифы народов мира”. Т. I, М., 1991, с. 380): Դիոնիսոսի մասին տե՛ս նաև Ա.

Դիոնիսոսը նույնացվում էր մեկ այլ մեռնող-հառնող աստվածության՝ Միհրին²⁴:

Իրանական լեզուներում, զուր չէ, որ warz- արմատը «հմայագերծվելով» պարզապես նշանակել է «գործել, բանել, արարել», «հողը մշակել»՝ ավեստ. varəz-, միջ. պարսկ. warzītan, պարսկ. warzīdan (սրանցից փոխառյալ է հայ. վարժ-ել արմատը): Նմանատիպ «հմայագերծ» իմաստներ է ստացել *welg h- / *werg- նախաձևը նաև գերմաներենում ու հունարենում²⁵: Բացի այդ, պատահական չէ, որ Μιθροβαρζάνης, *Bagawārza անունների առաջին մասում առկա դիցանունները մեռնող-հարություն առնող աստվածների անուններ են²⁶:

Այդ շարքին պետք է ավելացնել նաև 'Αριοβαρζάνης / 'Αριβαρζάνης անձնանունը, որը սովորաբար մեկնաբանվել է որպես «արիացիներին սիրելի», «արիացիներին հաճո»²⁷: Մակայն ելնելով վերը բերված անձնանուններին նրա նմանությունից՝ այստեղ նույնպես առաջին մասում կարելի է ենթադրել դիցանվան առկայություն: Բացի այդ, հաշվի առնելով 'Αριοβαρζάνης անվան փոքրասիական տեղայնացումները (այդ անունն են կրել մի շարք արքաներ ինչպես Գամիրք-Կապադովկիայում, այնպես էլ Պոնտոսում, այդպես է կոչվել նաև Փոյուզիայի սատրապը)²⁸, այն կարելի է ստուգաբանել որպես «Արայի սիրելի» կամ «Արայի նման գեղեցիկ, այրատես»: Այստեղ պետք է հաշվի առնել Փոքր Ասիայում Արայի՝ որպես մեռնող-հառնող աստվածության կամ հերոսի դիցաբանական կերպարի տարածվածությունը՝ Էր, Էրոս և այլ անուններով²⁹:

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՍ. ԱՌԱՍՊԵԼ

Հ.-ե. *welg h- կամ *werg- նախաձևի պարզական արմատն էր *wel-, որը հնդեվրոպական նախալեզվում ունեցել է մոտ ութ տարբեր իմաստներ³⁰: Հա-

²⁴ Պ է տ ր ն ու յ ա ն ն. Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ.– ՊԲՀ, 2006, № 2, էջ 266-270 :

²⁴ Հմմտ., օրինակ, Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի ն Ա ն ա ն ու ն. Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, I, Ը, էջ 76:

²⁵ В. И. А б а е в. Историко-этимологический словарь осетинского языка, с. 54.

²⁶ *Bhaga-ն եղել է մի առանձին աստծո հատուկ անուն, որը հաճախ համադրվել է Միթրայի հետ, իսկ սողոսողների կողմից համարվել է հարսանիքի աստված (В. Н. Т о п о р о в. Митра.– “Мифы народов мира”. Т. II, М., 1992, с. 155):

²⁷ Այս դեպքում այն իմաստով մոտ է սկյութական արքա 'Αριπαε(θ)ης-ի անվանը (Հերոդոտոս, IV, 76-78), որը մեկնվում է հետևյալ արմատներով՝ arya-paisa «արիացու պես», «արիատես» (В. И. А б а е в. Словарь скифских слов, с. 280):

²⁸ F. J u s t i. Նշվ. աշխ., էջ 25-26.

²⁹ Տե՛ս Ա. Մ ա տ ի կ յ ա ն ն. Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն ն. Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944, Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն..., էջ 370-382, ն ու յ ն ի՝ Հին հայոց աշխարհայացքը.– Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, Ղ. Ա լ ի շ ա ն ն. Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:

³⁰ J. P o k o r n i. Indogermanisches Etymologisches Wörterbuch. Bd. I, S. 1136-1145; Գ. Ջ ա հ ու կ յ ա ն ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 55: Հայերենում *wel- արմատի ունեցած դիցաբանական նշանակությունների մասին տե՛ս А. П е т р о с я н. Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 1, էջ 56-70:

յոց լեզվում, ինչպես հայտնի է, հ.-ե. բառասկզբի /w/-ն հնչյունափոխվում է /q/-ի:

*wel- նախաձևը և նրա տարբեր ձայնդարձերը հայերենում տվել են մի շարք ժառանգ-ձևեր, ինչպես՝

1) գել «ոլորած, պիրկ» / գեղ – «ոլորված» (այս արմատից աճականով ունենք գեղձ «պատատուկ, բաղեղ» բառը) / գելուլ – «ոլորել, ճմլել» / գելումն – «սրտի ճմլվելը» (որտեղից և սովորաբար առաջանում է «տենչալ, սիրահարվել» նշանակությունը) / գեղ – «սեր, տենչանք» (այս արմատից ունենք գեղձ – «սաստիկ փափագ» բառը),

2) գալ – «ոլորք» (> գալար) / գաղ- (այս արմատից է-ձ աճականով կազմված գաղձ-ն «պատատուկ, գայլխոտ» բառը, մեկ այլ՝ -տ աճականով կազմված է գաղտ – «ոլորված, ծածկված, թաքուն, գաղտնի» բառը),

3) գիլ – «գլորվել» (որից ունենք գլել, գլան, գլոր կազմությունները) / գիղ > *գղել (վերջինը պահպանվել է միայն գայթազդել բառի մեջ)³¹:

Հայերեն գեղեցիկ բառի արմատը, ըստ այդմ, կարող էր լինել թե՛ գեղ- «ոլորված, պիրկ» ձևը, թե՛ գեղ- «սեր, տենչանք» (որից՝ «ցանկալի, տենչալի») ձևը և թե՛ գիղ արմատի մի տարատեսակը (որպես «գայթակղիչ»): Ստացվում է, որ հայոց մեռնող-հարություն առնող աստծո՝ Արայի մակդիրը իր նշանակությամբ և իմաստով շատ մոտ է եղել սկյութական Βαρζάνοϋ – «հմայիչ, սիրելի, սիրեկան» անվանը: Ընդ որում, Գեղեցիկ մակդիրը կարելի է հասկանալ թե՛ արդի իմաստով՝ որպես «տեսքով, հմայիչ», թե՛ այլևս կորած նշանակությամբ՝ «առնական, ցանկալի, սիրելի, սիրեկան»³²:

Ըստ հայոց պատմական ավանդության՝ Հայաստանի թագավոր Արա Գեղեցիկը համարվում էր Ասորեստանի թագուհի Շամիրամի սիրելին (միգուցե, ավանդազրույցի այլ տարբերակում՝ սիրեկանը): Քանի որ Արա անունը, ամենահավանական ստուգաբանության համաձայն, կազմված է հայ. այր – «տղամարդ, տեր» բառից և -ա անվանակերտ վերջածանցից (ինչպես Հարմ-ա, Շար-ա), ապա Արա Գեղեցիկ կապակցությունը պարզապես նշանակել է «այր ցանկալի, սիրելի» և իրենից ներկայացրել է հնդեվրոպական կամ փոքրասիական մայր աստվածուհու սիրեցյալի հասարակ անունը³³:

Հավանաբար, Արա Գեղեցիկի կերպարն իր մեջ պարունակել է գեղ / գել արմատի ու նրա տարատեսակների պարունակած դիցաբանական բոլոր նշա-

³¹ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 505, 530, 533, 535 և այլն: Հայերենում գեղ, գեղձ, գաղձ(ն), գալ-ար, գող բառերի համանմանությամբ հ.-ե. *hel- արմատից և նրա ձայնդարձերից ունենք դեղ, դեղձ, դաղձ(ն), դալ-ար, դող բառերը (նույն տեղում, էջ 647-649):

³² Բացի այդ, ինչպես որ Դիոնիսոսի խորհրդանիշը եղել է բաղեղը, և նա կոչվել է «բաղեղային» (Էվիլ), այնպես էլ Արայի Գեղեցիկ մակդիրը, չի բացառվում, որ կարող էր առնչվել գեղձ, գաղձն – «բաղեղ, պատատուկ, գայլխոտ» բառերի արմատին:

³³ Ընդ որում, հաշվի առնելով այն, որ հ.-ե. *werg- նախաձևն ունեցել է ն՝ «ոլորել», և՛ «ոլորվել» իմաստները, Արայի Գեղեցիկ մակդիրը կարելի է մեկնաբանել նաև որպես «ոլորված» (հմնո. Շամիրամի հուռուքները):

նակությունները, և ոչ թե միայն զուտ հետագայում առաջացած «գեղեցիկ, սիրուն» իմաստավորումը³⁴:

ԱՐԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՆԱԽԱՏԻՊԸ

Մովսես Խորենացու հաղորդմամբ [գ. I, գլ. ԺԵ]՝ «Արան Նինոսի վախճանից քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին, Նինոսից նույնպիսի շնորհի արժանացավ, ինչպես և իր հայր Արամը (այսինքն՝ մարգարտե վարսակալ կրել և Նինոսի երկրորդը կոչվել – Տ. Դ.): Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով՝ ցանկանում էր տեսնել նրան...»³⁵: Շամիրամի մասին, Դիոդորոսից և Խորենացուց զատ, բավական ընդարձակ տեղեկություններ է հաղորդում նաև X դարի արաբ հեղինակ Մասուդին³⁶: Բացի այդ, XIX դարի վերջում գտնվել է անտիկ սիրավեպի մի պատառիկ, որի հերոսներն են Նինոսը և նրա անանուն սիրեցյալը՝ ենթադրաբար Շամիրամը³⁷:

Շամիրամի պատմական նախատիպը, հավանաբար, Շամնուրամաթ թագուհին է՝ Ասորեստանի արքա Շամշի-Ադադի V-ի կինը: Երբ մ. թ. ա. 811 թ. արքան մահացավ, նրանց որդի Ադադ-ներարին դեռևս անչափահաս էր, և Շամնուրամաթ թագուհին դարձավ նրա խնամակալը³⁸:

Խորենացին, որը որոշ տեղերում հետևում է Դիոդորոսի «Պատմական գրադարանին», չէր կարող չիմանալ, որ վերջինս որպես Նինոսի ժամանակակից նշում է Բարզանես անունով հայոց թագավորի: Ուրեմն, Պատմահայրը նախապատվությունը պատահականորեն չի տալիս առասպելախառը պատմական ավանդությանը, որտեղ Նինոսի ու Շամիրամի հակառակորդը կոչված է հայոց ամենասիրված աստվածներից մեկի անունով: Ըստ որում, այստեղ առաջնային դեր է խաղում նրա «Գեղեցիկ» մակդիրը, որն իբրև թե պատերազմի պատճառ է դառնում: Խորենացին, հետևաբար, անփոփոխ թողնում է հայոց առասպելի «Արա Գեղեցիկ» անվանումը՝ հավանաբար գիտակցելով, որ դա նույն ինքը՝ հունական աղբյուրի Բարզանեսն է:

³⁴ Դեռ ավելին, սովորաբար աստվածների մակդիրներն իրենք իրենց հերթին լինում են դիցանուններ և սկզբում գործածվելով որպես բաղադրյալ-սինկրետիկ աստվածության անվան բաղկացուցիչ մաս՝ ավելի ուշ իմաստագրվում են և ենթարկվում նորովի «ժողովրդական ստուգաբանության» (volks-etymologie). օրինակ՝ Վահագն Վիշապա-Քաղ (հետագայում՝ «վիշապ քաղոդ»), Տորք Անգեղ-եայ (հետագայում՝ «ան-գեղ, տգեղ»), Ամանոր Վանա-Տուր (հետագայում՝ «վան, իջևան տվող»), Անուշաւան Սաւա-նուէր (հետագայում՝ սոսիներին նվիրված), Աստղիկ Վարդա-Մատն (հետագայում՝ «վարդե մատներով»), Արա Գեղ-եցիկ, Արամազդ Արի և այլն:

³⁵ Մովսիսի Խորենացու պատմություն հայոց (քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխատասիրությամբ Ստ. Մալխասյանի), Երևան, 1981, էջ 61:

³⁶ Ա. Տեք - Ղ և ռ ն ղ յ ա ն. «Արա և Շամիրամ» առասպելի մի արձագանքը արաբ պատմիչ Մասուդու մոտ.– Հողվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 117:

³⁷ Ն. Ա դ ո ն ն ց. Երկեր, հ. Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ (հատորը հրատարակության ներկայացրեց Պ. Հ. Հովհաննիսյանը), Երևան, 2006, էջ 23-25:

³⁸ Ն. Ա դ ո ն ն ց. Հայաստանի պատմություն..., էջ 93:

Իհարկե, Խորենացու պատմական հայեցակարգում Արամի որդի Արա Գեղեցիկի պատմական կերպարը հավաքական է, ինչպես և Նինուսինն ու Շամիրամինը, սակայն նրա ձևավորման հիմքում ընկած մի քանի իրական դեմքերից մեկը կարող էր առավել մեծ նշանակություն ունենալ:

Թվում է, թե Արայի պատմական նախատիպը Վանի թագավորության արքա Սարդուրի I-ն է: Նա հիշատակվում է ասուրական արձանագրություններում (մ. թ. ա. IX դ. II կես) և արդի հետազոտողների կողմից համարվում է Արամեի հաջորդը: Նմանապես Խորենացին Արային համարում է Արամի որդի և հաջորդ: Թեև Սարդուրի I-ն ինքն իրեն կոչում է «Լուծիպրիի որդի», սակայն նման ուրարտական արքա չի եղել, հնարավոր է, որ դա լուկ մի փոքրիկ երկրամասի տիրակալ էր, չի բացառվում նաև, որ դա Արամեի մյուս անունն է³⁹: Ամեն դեպքում, ասորեստանյան արձանագրություններում Արամեին հաջորդում է Սարդուրի I-ը, և այստեղ արդեն էական չէ՝ արդյոք նրանք հայր և որդի էին, թե ոչ:

Սարդուրի կամ Սարդուր անունը միակն է ուրարտական արքայանուններից, որը գրվում է միանգամից երկու որոշագրով՝ ^{md}Sar-du-ri. այդ որոշագրերից առաջինը (^m)՝ անձնանվան, իսկ երկրորդը (^l) ղիցանվան ցուցիչ է: Իր մի քանի տասնյակի հասնող հիշատակումներից միայն մեկ դեպքում է այս անձնանունն ուրարտական արձանագրություններում գրվում առանց ղիցանվան ցուցիչի (այն էլ ոչ թե Սարդուրի I-ի, այլ Սարդուրի II-ի վիմագրում): Սևանա լճի արևմտյան ափից գտնված այդ ժայռափոր վիմագրում թագավորի անունը վկայված է ^mSar-du-ri տարբերակով⁴⁰, ինչը, հնարավոր է, պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ անձնանունն այլևս չէր գիտակցվում որպես ղիցակերտ:

Ինչնէ, սկզբնապես Սարդուր անձնանունը ղիցակերտ էր, այսինքն՝ նրա առաջին մասում առկա է աստվածության անուն: Sars սեպախմբի հիմնական նշանակությունը որպես գաղափարագիր ընթերցվում է հենց Istar⁴¹: Փաստորեն, արքայանվան ^{md}Istar-dori գրության ձևը ցույց է տալիս, որ այն կազմված է սիրո, տարփանքի և ռազմի աստվածուհի Իշթարի անունից⁴²: Գ. Ղափանցյանի կարծիքով՝ Սարդուրի անվան առաջին մասում ընդհանրապես կարդացվել է Իշթար ղիցանունը⁴³: Բ. Դյակոնովի կարծիքով՝ այդ արքայանունը կարդացվել է Իսարդուրի⁴⁴: Օձասարի արձանագրության մեջ Սարդուրի արքայանունը հենց այդպես էլ գրված է՝ ուղղակի Իշթարի գաղափարագրով⁴⁵: Առաջ-

³⁹ Լուծիպրիի վերաբերյալ հայտնված այս և բազմաթիվ այլ ենթադրությունների քննությունը չի մտնում ներկա հոդվածի խնդիրների մեջ:

⁴⁰ Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 303-304.

⁴¹ R. В о г е г. Assyrische-babylonische Zeichenliste. Neukirchen-Vluyn, 1978, S. 86, 268.

⁴² Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 440; Н. В. А р у т ю н я н. Նշվ. աշխ., էջ 560:

⁴³ Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 49:

⁴⁴ И. М. Д ъ я к о н о в. Ассиро-вавилонские источники по истории Урарту.— “Вестник древней истории”, 1951, № 2, с. 339, комм. 3.

⁴⁵ Վ. Ա. Բ գ ո լ մ ն և Վ. Հ. Հ. Կ ա ռ ա զ յ յ ա ն, Ա. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Օձասարի սեպագիր արձանագրությունը.— ՊԲՀ, 1997, № 1, էջ 193:

նորդվելով այդ տարբերակով՝ մյուս դեպքերում նույնպես, ըստ երևույթին, Սարդուրի անձնանունը կարելի է կարդալ Šarduri:

Փաստորեն, իŠardur(i)>Šardur(i) արքայանունը, որը աքքադերենում բառացիորեն նշանակել է «Իշթարը իմ ամբողջ է»⁴⁶, պետք է ունենար մոտավորապես հետևյալ իմաստները՝ «Իշթարի հովանավորյալ» (?), «Իշթարին ձոնված» (?), «Իշթարի տուրք» (?):

Իսկ այն ենթադրությունը, թե Սարդուր(ի) անունը կազմված է ուրարտական *Sar-di-i աստվածուհու անունից, քիչ հավանական է, քանի որ այդ երկու անունները գրվում են տարբեր սեպանշաններով. վերջինը՝ sar, իսկ առաջինը՝ sar, որը, ըստ երևույթին, կարող էր կարդացվել նաև s'ar: Ամբողջ Իշթարդուրի անվան ճշգրիտ թարգմանությունը պայմանավորված է ուրարտական սեպագրերի լեզվում նրա երկրորդ՝ duri մասի նշանակությամբ⁴⁷:

ԻՇԹԱՐԴՈՒՐԻ I ԱՐՔԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Իշթարդուրի I արքայի մասին տեղեկությունները խիստ սահմանափակ են: Նա ընդամենը շինարարական վեց արձանագրություն է թողել Վանի ժայռի ստորոտում՝ բոլորն էլ միննույն բովանդակությամբ, գրված ասուրերեն լեզվով, ուր պատմում է Այնիունի քաղաքից⁴⁸ իր՝ քարեր բերելու և պարիսպ կառուցելու մասին: Այդ ժամանակ, հավանաբար, Վանի թագավորության արքաները դեռևս ուրարտերեն չէին գրում:

Մեզ հայտնի չէ այս Իշթարդուրիի (և հաջորդ Իշթարդուրիների) իսկական անունը, համենայնդեպս ասուրերեն (իսկ հետագայում՝ ուրարտերեն) նրանք կոչվել են այդ անվամբ: Իշթարդուրի I-ը ինքն իրեն անվանում է «արքա մեծ, արքա հզոր, արքա տիեզերքի, արքա Նաիրիի, արքա, որին հավասարը չկա, զարմանալի հովիվ՝ մարտից չերկնչող, արքա՝ անհնազանդներին հպատակեցնող...»⁴⁹:

Եթե Իշթարդուրի I-ը ինքն իրեն կոչում է Նաիրիի արքա, ապա ասորեստանյան տեքստերում նա անվանվում է ուրարտացի: Ըստ աքքադական (ասուրական) սեպագիր աղբյուրների՝ մ. թ. ա. 830 թ. Ասորեստանի արքա Սալմանասար III-ի զորավար Դայյան-Աշշուրը ճակատամարտում հաղթեց «ուրար-

⁴⁶ И. М. Дьяконов. *Նշվ. աշխ.*, էջ 339, ծանոթ. 3:

⁴⁷ Կարելի էր կարծել, որ duri բառը նշանակել է «սիրելի, հաճելի, դուրեկան» (իսկ ամբողջ անունը՝ «Իշթարահաճո») և իր հետքը թողել է հայերենում անհայտ ծագում ունեցող դուր «հարթ, հեշտ, դուրին», նաև՝ «հեշտանք» բառի մեջ, որից ունենք դուրեկան բառը (ի դեպ, Գ. Ջահուկյանն այս արմատի և դրանից կազմված դիւրին ածականի համար հավանական է համարում ուրարտական ծագումը. տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. *Հայող լեզվի պատմություն*, Երևան, 1987, էջ 438, 440): Սակայն այս դուր արմատի հին ձևն է դիւր, որը պիտի արտացոլեր սեպագրային *di-u-ri կամ *dip-ri / di-ip-ri ձևերը:

⁴⁸ Մա երբեմն նույնացվում է Արտամետի հետ:

⁴⁹ Н. В. Арутюнян. *Նշվ. աշխ.*, էջ 9: Սարդուրի-Իշթարդուրի I-ի ժամանակաշրջանի դեպքերի մանրամասն քննությունը տե՛ս Н. В. Арутюнян. Биайнили (Урарту) – В кн.: «Военно-политическая история и вопросы топонимики». Ереван, 1970, с. 119-135.

տացի Մեդուրիի» գորքերին, գրավեց Ունգամունի քաղաքը շրջակա բնակավայրերով և հիմնահատակ ավերեց դրանք⁵⁰:

Չորս տարի անց՝ մ. թ. ա. 826 թ., նույն գորավարը Մուծածիրի տարածքով հասավ «ուրարտական ամրոցներին», սակայն չգրավեց դրանք, այլ միայն հրկիզեց ամրոցները շրջապատող մոտ հինգ տասնյակ բնակավայրեր: Այնուհետև նա անսպասելիորեն թեքվեց դեպի արևելք՝ Գիլգան, իսկ ապա՝ Անդիա երկիրը ներկայիս Ատրպատականում (հյուսիսային Մարաստան)⁵¹: Հնարավոր է, որ Դայյան-Աշշուրը արդեն դաշինք էր կնքել Բշթարդուրիի հետ, ինչպես Նինոսն է Հայաստանի մի շարք քաղաքներ ավերելուց հետո դաշինք կնքում Բարգանեսի հետ և ապա զբաղվում Մարաստանի գործերով:

Այսպիսով, Բշթարդուրիի հետ առնչվող ռազմական իրադարձությունները բավական նման են Նինոսի և Բարգանեսի հակամարտության պատմությանը: Երկու դեպքում էլ ստորեւստանյան գորքերն արշավում են Հայկական լեռնաշխարհ, ավերում մի քանի բնակավայր, իսկ հետո թեքվում են արևելք և իրենց ռազմերթն ուղղում դեպի Մարաստան:

Ցավոք, աղբյուրներից հայտնի չեն Բշթարդուրիի և Բարգանեսի վախճանի հանգամանքները: Ինչ վերաբերում է Արայի մահվան մասին խորենացու հաղորդած պատումին, թե իբր նա պատահականորեն սպանվել է Շամիրամի գորքերի դեմ մղած ճակատամարտում, ապա դա կարող է զուտ առասպելի ազդեցության հետևանք լինել (մանավանդ որ Արային նորից հաջորդում է Արա անունով թագավոր): Այս Արայան Արան իշխում է մինչև Շամիրամի մահը:

* * *

Հարց է առաջանում՝ արդյոք մենք իրավունք ունենք հավատալու մ. թ. ա. I դարի մի հեղինակի տեղեկություններին, որոնք վերաբերում են նրանից մոտ ութ դար առաջ տեղի ունեցած իրադարձություններին: Այստեղ կարևոր նշանակություն է ձեռք բերում Դիոդորոսի օգտագործած աղբյուրների հարցը: Ասորեստանի և Պարսկաստանի վերաբերյալ տեղեկությունները Դիոդորոսը քաղել է Հերոդոտոսից, Կտեսիաս Կնիդացուց (V դ.) և Թեոպոլպոսից (IV դ.): Վերջին երկուսի գործերը մեզ չեն հասել, սակայն Կտեսիասից օգտվել է նաև պատմագրության հայր Հերոդոտոսը:

Կտեսիաս Կնիդացին բժիշկ էր, որն աշխատել է Աքեմենյանների արքունիքում, իր աշխատությունը գրել է՝ օգտագործելով պարսկական դիվաններում պահվող վավերագրերը: Այս պատճառով Աքեմենյաններին և նրանց անմիջականորեն նախորդող՝ Մարաստանին առնչվող դեպքերի վերաբերյալ Կտեսիասի տեղեկությունները (Հերոդոտոսի հաղորդմամբ) պետք է արժանահավատ համարել: Բնականաբար, ավելի վաղ, այն է՝ Ասորեստանին առնչվող ի-

⁵⁰ A. K. G r a y s o n. Assyrian Rulers of the Early First Millennium B.C. (858-745 B.C.), The Royal Inscriptions of Mesopotamia (RIMA), vol. III, Assyrian Periods, Toronto, 1996, A. O. 102.14: 141b-146a.; A. O. 102.16: 228'-244'.

⁵¹ Նույն տեղում, A. O. 102.14: 174b-190; A. O. 102.16: 320'b-341'a. Անդիա երկրի տեղադրության վերաբերյալ տե՛ս Ե. Գրեկյան. Մանայի թագավորության վարչաքաղաքական միավորների և դրանց տեղադրության շուրջ.՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIX, Երևան, 2000, էջ 164:

բաղարձություններն առավել շատ են պատվել առասպելական շղարշով: Այդուամենայնիվ, Կտեսիասը ժամանակով շատ ավելի մոտ է եղել ասորեստանյան և ուրարտական ժամանակաշրջանին, քան Դիոդորոսը:

Հատկանշական է, որ Ասորեստանին նվիրված առանձին գլուխ ունեցել է նաև Հերոդոտոսի «Պատմությունը»: Իր գրքի առաջին գլխում նա գրում է. «Այս Բարեղնում եղել են նաև այլ թագավորներ, նրանց մասին ես կխոսեմ Ասորեստանի մասին իմ պատմության մեջ»⁵²: Ցավոք, Հերոդոտոսի երկի այդ հատվածը մեզ չի հասել: Այլապես, ամենայն հավանականությամբ, կունենայինք խիստ արժեքավոր վկայություններ ոչ միայն Ասորեստանի, այլև Հայաստանի հին պատմության վերաբերյալ:

Արդյոք Բարգանես անվանաձևը Դիոդորոսը քաղել է Հերոդոտոսի, թե Կտեսիասի գրքերից՝ դժվար է ասել: Ամեն դեպքում, այդ երկուսի սկզբնաղբյուրն էլ, հավանաբար, եղել են քբեմենյան արխիվները: Դրանք, իրենց հերթին, հին շրջանի պատմության մասին վկայություններ պիտի հաղորդեին մարասկյութական վավերագրերից:

Դիոդորոսի և Խորենացու պատմություններից՝ Շամիրամը հենց Բշթար աստվածուհու պատմականացված տարբերակն է: Այդ պատճառով՝ «Բշթարի հովանավորյալ» Բշթարդուրին կամ «Շամիրամի սիրելի» Արա Գեղեցիկը՝ Հայկական լեռնաշխարհի որոշ շրջաններում բնակվող կամ ավելի ուշ հայտնված սկյութների կողմից կարող էր կոչվել *Miθra-wārzāna, *Aria-wārzāna, *Baga-wārzā(n) անձնանունների տիպի մի բարդությամբ, որից մեզ հասել է միայն երկրորդ՝ Warzan(es) բաղադրիչը՝ Դիոդորոսի վկայությամբ: Բսկ թե ինչպես է կոչվել այդ արքան իր մայրենի լեզվով, հնարավոր չէ ասել, որովհետև այդ լեզվով արձանագրություններ կա մ չեն եղել, կա մ էլ չեն հասել մինչև մեր օրերը:

САМЫЙ РАННИЙ ЦАРЬ АРМЕНИИ, УПОМЯНУТЫЙ ИНОСТРАННЫМИ ИСТОРИОГРАФАМИ

ТОРК ДАЛАЛЯН

Р е з ю м е

Диодор Сицилийский (I в. до н. э.) в своей “Исторической библиотеке” упоминает о царе Армении Барзане (Βαρζάνης) в связи с его конфликтом с ассирийским царем Нином [II, 1, 8-9]. Этимология этого, вероятно, скифского имени – Βαρζάνης – может быть связана с иран.*warz- ‘charm’ (ср. осет. warzпн / warzun ‘любить’, сред.перс. warz- ‘charm’). Иран.*warz- восходит к и.-е. *welgʰh- или *werg-; этот корень в армянском закономерно дал форму գեղ-ձ geł-j ‘возделение, страсть’. Таким образом, иранский антропоним *Wārz-āna мог быть дословным переводом армянского Geł-es’ik (или же, наоборот, последняя форма – отражение иранского *Wārz-āna). Мовсес Хоренаци называет армянского царя Ара Гехецика (Geł-es’ik, дословно – Ара Прекрасный) современником Нина и возлюбленным Семирамиды – жены Нина. Нин и

⁵² Հ է ր ո ղ ո ս ու Պատմություն..., I, 75, էջ 184:

Семирамида символизируют самый могущественный период Ассирийской державы. Семирамиде свойственны также типичные черты ассирийской богини Иштар. Урартский царь Сардури или Иштардури I (II половина IX в. до н. э.), видимо, был историческим прототипом Барзана (у Диодора) и Ара (у Хоренаци). В клинописной форме имени Сардури содержится идеограмма Иштар, так что это название первоначально звучало, скорее всего, как Иштардури. Учитывая все это, можно предположить, что имя Βαρζάνης, засвидетельствованное Диодором, является второй частью некоего утерянного антропонима, похожего на сложные имена Ἄριοβαρζάνης, Μίθροβαρζάνης, Bagawarza и т. д. Имя этого царя могло сохраниться в Ахеменидских архивах, которые стали основными первоисточниками для Ктесия, а через него – для Геродота и Диодора.

THE EARLIEST KING OF ARMENIA MENTIONED BY FOREIGN AUTHORS

TORK DALALYAN

S u m m a r y

Diodoros in his “Historical Library” mentions about Armenian king Βαρζάνης in regard with his conflict with the Assyrian king Ninus [II, 1, 8-9]. This probable Scythian name (Βαρζάνης) can be etymologized by Iran. *warz- ‘charm’ (cf. Osset. *warzan* / *warzun* ‘to love’, M.Pers. *warz-* ‘charm’). Iran. *warz- is connected with I.E. *welg’h- or *werg- which has reflected in Armenian դեղ-ձ *gel-j* ‘intense desire’. Thus the Iranian name *Wārz-āna could be a translated form of Armenian *Gel-ec’ik* (or, on the contrary, the last could reflect the name *Wārz-āna). Movsēs Xorenac’i calls the Armenian king Ara *Gel-ec’ik* (literally Ara the Beautiful) as a contemporary of Ninus and the lover of Semiramis, Ninus’s wife. Ninus and Semiramis are the symbols of the Assyrian might, as for Semiramis she has typical features of the goddess Ištar. The Urartian king Sarduri or Ištarduri I (the second half of the 9th c. B.C.) seems to be a historical prototype for Barzanes of Diodoros and Ara of Xorenac’i. The cuneiform writing of the name Sarduri contains the ideogram of Ištar, so it has been read also as Ištarduri. Therefore one can suppose that the name Βαρζάνης attested by Diodoros is the second part of some lost name like the names Ἄριοβαρζάνης, Μίθροβαρζάνης, Bagawarza, etc. The name of this king might be preserved in Achaemenid archives, which were the main sources for Ktesias (and through him for Herodotos and Diodoros).